ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4445-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի Հ.7372-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.10.2025թ. հ.20-Ել-69503 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Գրիգորի Հարությունյանի 30.11.2023թ. հ.Դ-103390-24 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Երևանի Աճեմյան փողոցի 3-րդ նրբանցքի հ.1/2 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Գրիգորի Աբգարի Հարությունյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.7372-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր 1.1 կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա՝ Երևան քաղաքի Աճեմյան փողոցի 3-րդ նրբանցքի հ.1/2 հասցեում գտնվող 99.99 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանում՝ «124.28» թիվը փոխարինել «99.99» թվով.

3) Որոշման 1-ին կետում՝ «75.98» թիվը փոխարինել «51.69» թվով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ